

քուժ պէտք է ուղղակի տալ նորը և մշակելով աշակերտի ներկայութեամբ այդ նոր մասերը, առանձնապէս մատչելի դարձնել այդ բնաւորիչ կողմերը: Էին մտապատկերներէ ընդ-րօդ ուղիղ աները առանց այն էլ բաւականին խառն կերպով վերարտադրուած են, այնպէս որ նրանց վրայ առանձնապէս ուշադրութիւն դարձնելը կարող է միմիայն մթադուենել նորի իւրացումը և ամեն մի նոր բան հեշտութեամբ հին ենթադ-րել տալ: Եւսկ նորի բացատրութիւններէ և վերլուծումներէ ընթացքում եթէ հին մտապատկերներէ շաղկապման անհրա-ժեշտ կարիքը կը դադարէ, այդ կարիքն միշտ էլ հնարաւոր է բաւարարել նորի և հինի խառն միաձուլումով և ոչ դաւ-դաւ մշակումներով, ինչպէս այդ Յիւլէրն է պահանջում: Նո-րը, բնաւորիչը ջոկելն է հոգու մեծ յատկութիւնը:

Նարունակի

Գ. Էդիլեան.



ԽԵԼՕՔ ՏՂԻ ՄԱՍԻՆ ՎԻՊԱԿԸ

ՄԱՐԿ ՏՎԵՆԻ.

Եղել է չի եղել մի փոքրիկ խելօք տղայ է եղել, անունն էլ Յակօբ Քլիմէնս էր. Նա միշտ և ամեն բանում լսում էր իւր ծնողներին, որչափ էլ որ նոցա պահանջները անարդար և անխոհեմ լինէին, նա միշտ սովորում էր իւր դասերը և երբէք չէր ուշանում կերակնօրեայ ուսումնարան դնալու: Նա ցան-կութիւն չէր ունենում դասեր բաց թողնել նաեւ այն դէպ-քում, երբ որ իւր խելքը նորան շնջում էր, թէ դասեր բաց թողնելը ամենից աւելի օգտաւէտ բան կը լինի նորա համար: Ընկերակից մանուկներից ոչ ոք չէր կարողանում հասկանալ, թէ ինչու նա այդպէս է վարւում, բայց և այնպէս նա շա-րունակ իւրն էր անում: Նա երբէք սուտ չէր խօսում, ինչ օգուտ էլ որ ունենար սուտ խօսելուց: Նա պարզ առում էր, թէ սուտ խօսելը լաւ բան չէ, և այս արդէն բաւական էր համարում: Եւր աղնութեամբ նա բացէ իրաց ծիծաղելի էր դառնում: Առհասարակ այս Յակօբը աշխարհի ամենատարօ-րինակ տղան էր: Գիրակի օրերին նա չէր խաղում, թռչնի բոյ-ները չէր քանդօնդում, թափառող երաժիշտների կապիկնե-րին կրակի մէջ կեծացրած դրամներ չէր աւալիս. բացի սոցա-նից, նորան ամենևին չէին հետաքրքրում խելացի զուարճու-

թիւնները: Ընկեր տղերքը շատ էին աշխատում հասկանալ նորա մտքերը և բացատրել նորա վարմունքը, բայց որ և է բաւարար եղբակացութեան չէին գալիս: Ինչպէս որ ես ահնարկեցի, նորա մութը հերպոյով հասու էին լինում, թէ դա երևի փոքր ինչ «բախում» է, ուստի և նորան բարեօրոտութեամբ իրանց հովանաւորութեան տակ ընդունեցին և փութաջանութեամբ պաշտպանում էին նորան ամեն տեսակ աւանխորժութիւններից:

Այս պատիկ խելօք տղան կարգացել էր բոլոր մանկական ընթերցարանները, որոնք ամենամեծ հիացում էին պատճառած նորան: Նա հաւատ էր ընծայում պատիկ խելօք տղէրքին և լիովին վստահութիւն էր ընծայում նոցա: Աննաց մէջ երբ և իցէ պատահել մի այդպիսի տղին՝ այս էր նորա ամենարուստ ցանկութիւնը, որ բայց և այնպէս իսպառ չէր կատարւում: Կարելի է նորա ամենքը մեռել են նորա ծնունդուց առաջ: Երբ որ գրքի մէջ պատահում էր մի առանձին տեսակի խելօք տղին, նա ազահարար շտապում էր գրքի թերթերը կուլ տալ մինչև պատմութեան վախճանին հասնելը, որպէս զի շուտ իմանար, թէ ինչ վիճակի հանգիպեցաւ տղան, այն ինչ ինքն էլ յօժար էր հազար հազար մղոններ կտրել, միայն թէ իւր աչքով տեսնէր այդ հաղուագիւտ տղին: Բայց այս բոլորը չէր օգնում: Այն գրքի պատիկ խելօք տղան վերջին գլխում անպատճառ մեռնում էր, և այնտեղ նկարագրուած էր լինում նորա թաղումը, այսինքն թէ ինչպէս նորա գերեզմանի շուրջը շարուած էին նորա բոլոր ազգականներն ու կիրակնօրեայ ուսումնարանի աշակերտները, չափազանց կարճ վարտիքներով և խիստ մեծ դռակներով, և թէ ինչպէս նորա ամենքը արտասուք էին թափում իրանց արշինանոց թաշկինակների մէջ: Այսպէս նորան վիճակւում էր միշտ հեռաթափուիլ, նորան երբէք չէր յաջողւում տեսնել պատիկ խելօք տղին, որովհետև բոլոր պատիկ խելօք տղերքը պատմութեան վերջը մեռնում էին:

Յակորը տոշորւում էր աղնիւ, պանծալի ձգամամբ, որ իւր անունը մանկական ընթերցարանի մէջ յիշատակուի: Նորա ցանկութիւնն էր, որ իւր մասին պատմութեան մէջ այնպիսի պատկերներ լինէին, ուր նկարուած լինէր, թէ ինչպէս ինքը հրաժարւում է խաբել մօրը և թէ մայրն էլ այս առթով ինչպէս ուրախութեան արցունքներ է թափում. թէ ինչպէս քուչի դրան առաջ կանգնած՝ վեց մանուկներով շրջապատած աղքատ կնոջը ինքը մի գրօշ է տալիս և թոյլ է տալիս այդ կնոջը, որ ծախսէ դրամը, բայց ոչ թէ շուայլէ,

վասն զի շռայլութիւնը մեղք է. թէ ինչպէս ինքը հերոսաբար հրաժարւում է մատնել այն չար տղին, որ միշտ ուսումնարանի ճանապարհին մի անկիւնում թաղնուած սպասում է Յակոբի երեւելուն, գաւաղանի ծեծով դարձնում է դորան տուն և յետեից դուռում:

— Կորի՛ր, կորի՛ր, ուսումնարան չգնաս:

Մանկական ընթերցարանի մէջ յիշատակուելը—այս էր Յակոբ Բլիվէնսի երազած ցանկութիւնը: Երբ որ նա երբեմն յիշում էր, թէ խելօք տղերքը միշտ մեռնում են, սաստիկ նեղութիւն էր զգում: Գիտէ՞ք ինչու. նա սիրում էր կեանքը, և նորա աչքում մանկական ընթերցարանի տղի գոյութեան ամենատանհաճոյ հանդամանքը մահն էր: Նա գիտէր, որ խելօք լինելը անօգուտ բան է: Գիտէր, որ ընթերցարանի տղերանց արտաքոյ կարգի խելօքութիւնը բարակացաւից էլ աւելի վտանգաւոր է. նա գիտէր, թէ նոցանից և ոչ մէկը կարող էր երկար դիմանալ իւր խելօքութիւններով: Բայց աւելի վերաւորական էր համարում այն մտածմունքը, որ եթէ երբ և իցէ ինքը ընթերցարանի մէջ պիտի յիշատակուի, նա արգէն մեռած կը լինի և այդ գիւրքը տ'սնելու չի արժանանայ. իսկ եթէ իւր մահուանից առաջ հրատարակուի գիրքը, այն ժամանակ իւր մասին պատմութիւնը այնքան էլ հետաքրքրական չի լինի, որովհետեւ մէջը կը պահասի թաղման սրտաշարժ պատկերը: Այս դեռ քիչ է: Եւ ի՞նչ իսկական ընթերցարան կը լինի, եթէ նորա մէջ չեն տպագրի այն խորհուրդը, որ ինքը՝ մտադիր է մահուանից առաջ տալու: Այդ պարագաներում անել այն բոլորը, ինչ որ ինքը իւր ոյժերով մարդկօրէն կարող է կատարել—այսինքն ապրել առաքինութեամբ, իւր գոյութիւնը քաշքշել, քանի որ դեռ ևս հնարաւոր է, և պատրաստ ունենալ իւր վերջին կտակն ու ճառը, որպէս զի մահուանից անմիջապէս առաջ արտասանէ:

Սակայն չգիտեմ ինչով բացատրեմ, որ այս պստիկ խելօք տղի բոլոր բաները այլանդակ էին վերջանում. նորան չէր յաջողվում ոչ մի բան այնպէս անել, ինչպէս որ ընթերցարանի պստիկ խելօք տղերքին էր վիճակւում: Բախտը սորանց անդադար խնդում էր, իսկ չար տղերքը միշտ խորխորատ էին ընկնում կոտրած ստներով, բայց ինչ որ վերաբերում է մեր Յակոբին, սորա կծիկը միշտ որ և է կողմից խճճւում էր, ամեն բան ծուռն ու մուռ էր ընթանում: Եթէ դա տեսնում էր, որ Չիմ Բլէկը խնձոր է գողանում, և դորան մօտենում է, որ ծառի տակից իրան քարոյ կարգայ պստիկ չար տղի մասին, որ վայր է ընկել դրացու խնձորենուց և կուռը ջարդել

է, ջիւմը թէպէտ իրօք նոյնպէս ընկնում էր ծառից, բայց ընկնում էր տակը կանգնած Յակոբի վրայ, կոտորում էր նրա կուռը, իսկ ինքը անվնաս էր մնում: Այս բանը Յակոբի համար բոլորովին անբացատրելի էր. գրքերից այդպիսի բաներ երբեք չէր կարդացել:

Իսկ մի անգամ, երբ որ մի քանի չար տղերք այնպէս բռնեցին մի կոյրին, որ խեղճը ցեխի մէջ ընկաւ, և երբ որ Յակոբն էլ շտապով մօտեցաւ դժբախտին, որ օգնէ նորան սաքի կանգնելու և նորանից օրհնութիւն ստանալու, կոյրը ոչ միայն Յակոբին չօրհնեց, այլ դաւաղանով նորա գլխին խփեց և խրատեց, թէ աւելի վատթարին կը հանդիպի, եթէ մի անգամ էլ փորձէ վայր ձգել նրան, իսկ տալա սուտ սուտ ձեացնէ իբր թէ օգնում է նորան վեր կենալու: Այսպիսի դէպքեր չեն նկարագրուած ոչ մի գրքում: Յակոբը գիտմամբ այն բոլոր գրքերը թերթոտեց: Յակոբը սաստիկ փափագում էր մի բան, այն է մի այնպէս կադ, անպատուար, քաղցած շուն դանէր որ հալածուած լինէր մէկից կամ միւսից. որ ինքը կարողանար տուն տանել նորան, փայփայել, խնամել, և տալա վայելել շան անհուն հաւատարմութիւնն ու շնորհակալիքը: Վերջապէս մի այդպիսի շուն դտաւ և լիուշի բախտաւորուեցաւ. բերեց նորան իւր տունը, կերակրեց, բայց երբ որ բանը փաղաքշանքի հասաւ, շունը թափուեցաւ նորա վրայ, նորանից վարտիկը քաշեց, դդդդեց և նորան տուեց բաւական այլանդակ ձև: Յակոբը դարձեալ գիմեց իւր ընթերցարաններին, բայց ի հարկէ այնտեղ ոչ մի նման ու կերպ դէպք չգտաւ: Շունը հէնց այնպիսի շներից էր, ինչպէս որ գրքերի մէջ նկարագրած շներն էին, բայց նա բոլորովին այլապէս էր վարւում: Ահա տարակ ինչ որ այս տղան անում էր, միշտ իրան միայն անախորժութիւններ էր պատրաստում: Մի և նոյն արարքները, որոնց համար որ գրքերի տղերքը վարձատրւում էին, սորա համար դառնում էին ամենամահաբեր, քան ինչ որ ինքը մտածել անգամ կարող էր:

Մի անգամ նա գնում էր կիրակնօրեայ ուսումնարանը և տեսաւ, որ մի քանի չար տղերք պատրաստւում են առադատանաւով զբօսնելու: Նա սարսափեց, որովհետև գրքերից իրան յայտնի էր, որ կիրակի օրը նաւագնաց տղերքը անպատճառ պիտի խեղդուեն: Նա վաղեց բարձրացաւ լաստի վրայ, որ զգուշացնէ նոցա, բայց գերաններից մէկը շուռ եկաւ նորա ոտի տակը, սայթաքեց նա և ընկղմուեցաւ գետի մէջ: Թէպէտ նորան իզկոյն ջրից հանեցին, բժիշկը նորանից ջուրը դուրս քաշեց և փութօով օգտուեց նորան, բայց նա

մըսեց, հիւանդացաւ և տասը շաբաթ անկողնի մէջ պառկած մնաց: Բայց այս պատմութեան մէջ նրա համար ամենաանբացատրելին այն էր, որ չար տղերքը նաւի մէջ նստած շատ զուարճացել էին և առն էին դարձել գերիվերոյ ողջ և զուարթ: Յակոբ Բլիվէնսը այսպիսի օրինակ չէր յիշում գրքերից. նա բացէիբաց ապուշ կրթեցաւ զարմանքից:

Երբ որ առողջացաւ, նա կարծես թէ փոքր ինչ շշմածի պէս էր, բայց և այնպէս վճռեց շարունակել առաջուայ կեանքը: Նա խոստովանում էր, որ մինչ այսօր պատահած իւր արկածները չէին պատշաճում ընթերցարանների մէջ նկարագրելու համար, բայց շմուռանք, որ այդ բանի համար հարկաւոր հասակը դեռ ևս չունէր նա. իսկ եթէ համբերութեամբ հասնէ մինչև ժամանակի լրանալը, նա յոյս ունի անշուշտ մատակարարել ընթերցարանի համար կարևոր նիւթը: Եթէ մինչև անգամ ամենայն բանի մէջ անյաջողութիւններին հանդիպի, դէթ պատրաստ կունենայ նախագերեզմանական ճառը: Նա գրքերից տեղեկացաւ և գտաւ, որ իւր համար արդէն հասել է ժամը, երբ որ կարող է նաւի մէջ ստանձնել ինկի պաշտօնը: Դեմեց մի նաւապետին, իսկ երբ որ սա նրանից հարցրեց յանձնարարականները, նա գրպանից հստատաբար հանեց մի գիրք և ցոյց տուեց նաւապետին մակագրութիւնը — Յակոբ Բլիվէնսին նրա մեծապէս սիրոյ ուսուցչից: Բայց բանից դուրս եկաւ, որ նաւապետը կոպիտ, անկիրթ մարդ է եղել: Նա ասաց.

— Է՛հ, կորցրու աչքիցս: Դա ի՞նչ ապացոյց է, թէ դու կացող ես ամանները լուանալ և տախտակամածը մաքուր քերել: Դու ինձ պէտք չե՛ս:

Ահա, յիշաւի, այս էր ամենաարտառայ պատահմունք Յակոբի ապրած կեանքի մէջ: Դրբի վրայ ուսուցչի մակագրութիւնը միշտ և հանապաղ զարթեցրել է նաւապետների ամենաաքնքոյշ զգացմունքներ, ճանապարհ էր բաց անում նաւերում լաւ վարձատրուած պատուաւոր պաշտօններին համար, — այո՛, որահայն այս այսպէս էր այն բոլոր գրքերի նկարագրութեամբ, որ նա կարդացել էր: Նա էլ չէր հաւատում իւր ականջներին և աչքերին:

Այսպէս ոչ մի բան չէր յաջողւում այս տղին: Ոչ մի բան չէր կատարւում նրա ցանկութեամբ: Մի օր նա գնաց պատիկ չար տղերանց խրատելու, և նրանց ժողոված դատաւ երկաթագործի հին խանութում: Նորա այնտեղ զբաղուած էին մի փոքր կատակով — տասն ու չորս կամ տասն ու հինգ շներին շղթայած և կապել էին, և հէնց նրա դալատեան վայրկեանում

Նրանց պոչերը դարդարում էին նիտրոցլիցերինի *) դարդակ շիշերով: Յակոբի սիրտը յուզուկեցաւ: Նա նստեց մեծ շշի վրայ (որովհետեւ, երբ որ նրան պարտքը հոշում էր, էլ ուշադրութիւն չէր դարձնում ձեթի բծերի վրայ), բռնեց առաջին շան վզակապը և սաստիկ հայեացք ձգեց շար Տոմ Զոնսի վրայ: Բայց հէնց այս վայրկեանին արհեստանոցը մտաւ հատադած Վէլտէպէր վարպետը: Բոլոր շար տղերքը փախան, իսկ Յակոբ Բլիվէնսը իւր անմեղութեամբ մնաց անզարփ: Նա վեր հացաւ շշից և սկսեց ընթերցարաններում տպած այն դեղեցիկ կարճ ճառերից մէկը, որոնք միշտ սկսւում են «ըստ ընտիրտ պարոն» բառերով:

Բայց վարպետը թող չտուէց, որ նա շարունակէ: Նա բռնեց Յակոբ Բլիվէնսի ականջից, շրջեց նրան և նրա մէջքին մի թաթալօշ դմբեց: Խսկոյն մեր պատիկ խելօք տղի աչքերը մթնեցին, կարծես թէ նա առաստաղից դուրս թռաւ և սլացաւ ուղղակի դէպի արեւը, իսկ նրա յետեից, որպէս մի վիշապի պոչ, վեր շարժուեցան տասնութինգ շների կտորտանքը: Չգիտեմ հէրիաթ է այս, թէ չէ, բայց այնուհետեւ երկրի վրայ այլ ևս ոչ ոք չի տեսել վարպետ Վէլտէրին, և ոչ էլ այն հին արհեստանոցը, իսկ ինչ որ վերաբերում է պատիկ Յակոբ Բլիվէնսին, այլ ևս նրան չյաջողուեցաւ արտասանել իւր նախագերեղմանական ճառը, որ նա այնքան ժրջանութեամբ պատրաստել էր, եթէ միայն թռչելու միջոցին այն չխօսեց թռչնիկներին, որովհետեւ թէպէտ նրա աճիւններից նշանաւոր մասը կախ մնաց մի ծառի վրայ, մերձակայ գաւառում, բայց մնացած բոլորը ցրել էին եղել բոլոր չորս կողմերում և երկար ժամանակ դեռ հաւաստեօք ասել կարելի չէր, արդեօք ողորմելին կենդանի է, թէ իրօք մեռել է: Ոչ մի տղայ երբէք այդպէս լայնասփիւռ ցրել չի եկել:

Այսպէս կորաւ պատիկ խելօք տղան, որ ամեն հնար գործ էր դնում, որպէս զի լաւ տղայ լինի, բայց որը այն յաջողութիւնները չէր ունենում, ինչ որ վիճակւում էր ընթերցարանների տղերանց: Ամենայն տղայ, որ երբ և իցէ նրա պէս է վարուել, բաղտաւոր է եղել, — բայց ոչ այդ դժբախտը: Նրա վիճակը իրօք նշանաւոր է: Նրա նրա բախտը երբէք չի էլ բացատրուի:

Թարգմ. Ս. Մ.

*) Նիտրոցլիցերենը — ամենաստատիկ բռնկող նիւթերից մէկն է, որ վառողից բառասուն անգամ աւելի դօրեղ է: